

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԴԱՍՎԱՐ

(առարկա)

ԹԵՄԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԲԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Կազմեց՝

ՀԵՐՄԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ ԱՐԱԶԻ

(անուն, ազգանուն, հայրանուն)

ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի միջն. դպրոց ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

### Գլուխ 1

1.1 Համագործակցային ուսուցման ընդհանուր բնութագիր.....5

1.2 Համագործակցային ուսուցման մեթոդներ.....7

• Աշակերտների թիմային առաջադիմություն.....7

• Խճանկար.....8

• Շրջագայություն պատկերասրահում.....8

• Խմբային հետազոտության մեթոդ.....9

• Անկյուններ.....9

1.3 Համագործակցային ուսուցման առավելություններն ու արդյունավետությունը.....10

### Գլուխ 2

2.1 Համագործակցային ուսուցումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման գործընթացում (առաջարկություններ)..... 12

2.2 Հետազոտական աշխատանք.....16

Եզրակացություն.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցում ուսուցման գլխավոր նպատակը աշակերտների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն և անձի ամբողջական զարգացումն է: Վերջին ժամանակներում նկատվում է ուսման նկատմամբ հետաքրքրությունների նվազում , ուստի պահանջվում է ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն խնդրի լուծմանը:

Այստեղ մենք խոսելու ենք ինտերակտիվ մեթոդի մի առանձին տարատեսակի մասին, որն իր որոշակի առանձնահատկությունների շնորհիվ առանձնացել և ստացել է համագործակցային ուսուցում անվանումը, և որը կարող է հանդիսանալ տվյալ խնդրի լուծման արդյունավետ տարբերակ:

***Թեմայի արդիականությունը*** կայանում է նրանում, որ ներկա շրջանում կարևորվում են աշակերտակենտրոն ուսուցումը, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ մի շարք մեթոդներ: Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ , մասնավորապես, «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման կոնկրետ օրինակները , մշակումները սակավ են և այս հետազոտությունը ուղղված կլինի դրանց համալրմանը:

***Մեր նպատակն*** է «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման գործընթացում համագործակցային մեթոդների առանձնահատկությունների բացահայտումը և կիրառման ուղիների մշակումը:

***Մեր խնդիրն*** է ուսումնասիրել և վերլուծել համագործակցային ուսուցման մեթոդները, պարզել առարկայի ուսուցման գործընթացում մեթոդի կիրառման առանձնահատկությունները և մշակել օրինակներ:

*Հետազոտության առարկան* համագործակցային ուսուցման մեթոդների կիրառմամբ մշակված դասերի պլաններն են , դրանց կիրառումը և արդյունավետության գնահատումը:

Արդյունքում կներկայացվեն ուսուցման գործընթացում համագործակցային տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները և կառաջադրվեն <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասերի օրինակներ՝ այս մեթոդի կիրառմամբ:

*Գիտական վարկածը*–<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցման գործընթացում այս տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է.

- Ուսուցման արդյունավետության բարձրացմանը, ավելի լավ յուրացմանը և ուսումնական նյութի մտապահմանը
- Նպատակներ ձևավորելու և դրանք իրականացնելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- Վերլուծելու, համադրելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- Ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:[13]

Այս հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնցից յուրքանաչուրը տրոհված է առանձին պարագրաֆների և եզրակացությունից:

## ԳԼՈՒԽ 1

### 1.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ավանդական մեթոդներն ունեն մեկ ընդհանուր թերություն, որ դրանց ոչ բոլոր դեպքերում է հաջողվում ակտիվացնել ողջ դասարանին: Սա նաև դասարանային համակարգի թերությունն է: Իրար հետևողական նստարաններով դասարանը նրա համար է, որ աշակերտները, իրար հետևում թաքնվելով, նաև խուսափեն ակտիվ մասնակցելուց: Հաջորդ թերությունն այն է, որ ավանդական ուսուցման ընթացքում սովորողները միմյանց հետ չեն համագործակցում, չեն աջակցում, այլ միայն ու միայն գտնվում են մրցակցության պայմաններում: Չի՞շենք, որ պետական կարևոր խորհրդակցությունները միշտ կլոր սեղանի շուրջ են ընթանում: Այդպես ստեղծվեց , փոխներգործող(ինտերակտիվ) մեթոդների ընտանիքը: Անգլերենում inter բառը նշանակում է փոխադարձ, իսկ act-ը ` գործողություն է, ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համարգչի հետ, այսպիսով` ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցման նոր տեխնոլոգիա է` հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման ու սովորողի ազատության վրա:

Ինտերակտիվ մեթոդի մի առանձին տարատեսակ է, որն իր որոշակի առանձնահատկությունների շնորհիվ ի սկզբանե առանձնացել և ստացել է համագործակցային ուսուցում անվանումը:

<<Իմ խորին համոզմամբ ` ապագան համագործակցային գաղափարախոսությանն ու համագործակցային ապրելակերպինն է >>,-նշում է ուսուցման կոլեկտիվ եղանակի հայտնի գաղափարախոս Մ. Մկրտչյանը: Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: <<Թալմունդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ>>,-գրված է Թալմունդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր,

որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են և սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը:

### **Սահմանում**

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն , և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով: Եթե համառոտ սահմանենք, համագործակցային ուսուցումը սովորելն է՝ խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում է ըմբռնելու նյութը:[2]

Այս մեթոդներից յուրաքանչյուրի հիմքում ընկած է խմբային ուսուցումը՝ աշխատանք խմբերով: Խումբը կարող է ունենալ 2,3,4 կամ 5 անդամ:

Այն դեպքում , երբ խմբի անդամների թիվը նվազագույնը՝ 2-ն է, ստանում ենք ուսուցման կազմակերպման գույգային ձևը՝ հաստատուն կազմով համագործակցային հաղորդակցություն կամ ուսուցման կազմակերպման կոլեկտիվ ձև՝ հաղորդակցություն ուսուցիչ-աշակերտ կամ աշակերտ-աշակերտ փոփոխական կազմով գույգերում: Ընդ որում՝ յուրաքանչյուր սովորող հերթով հաղորդակցվում է մյուսների հետ, և արդյունքը լինում է այն, որ բոլորը հաղորդակցվում են բոլորի հետ:

### ***Ժամանակ պահողը.***

- հետևում է, որ աշխատանքը ավարտվի տրված ժամկետներում,
- քաջալերում է բոլորին սկսել և անել առավելագույնը,
- հանդես է բերում նախաձեռնություն, եթե ուրիշ ոչ ոք այն չի ցուցաբերում,

### ***Օգնականը.***

- ապահովում է, որ բոլորը իրազեկ լինեն, թե ինչ է ակնկալվում իրենցից,
- օգնում է նրանց , ովքեր օգնության կարիք ունեն,
- տարբեր առաջարկություններ է անում:

### ***Ստուգող/գնահատողը.***

- Ապահովում է, որ բոլորը հասկանան և ի վիճակի լինեն փոխանցելու ստեղծված տեղեկությունները
- Ապահովում է, որ բոլորը կատարեն իրենց առաջադրանքները,
- Տալիս է քննադատող, բայց կարևոր հարցեր:

***Խրախուսողը.***

- Խրախուսում է բոլորին անել առավելագույնը,
- Միավորներ է տալիս լավ գաղափարների կամ լավ աշխատանքների համար
- Ամաչկոտ կամ լռակյաց անձանց հրավիրում է մասնակցել:

***Կազմակերպիչը.***

- Տրամադրում և ապահովում է անհրաժեշտ բոլոր նյութերը և գործիքները,
- Ստեղծում է թիմային աշխատանքի համար հարմար և արդյունավետ միջավայր,

Համագործակցային ուսուցման ժամանակ խոսելը հանգեցնում է մտածելու, իսկ մտածելը՝ սովորելու:

**1.2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ**

Ստորև ներկայացնենք համագործակցային ուսուցման աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն և անկյուններ մեթոդները:

***Աշակերտների թիմային առաջադիմություն***

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:

Նկարագրություն

Այն համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման մեթոդները կիրառող սկսնակ ուսուցիչների համար: Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը: Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:

Ընթացքը

Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց տառասեռ խմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների, ապահովելով տղա-աղջիկ հավասարությունը (հնարավորության դեպքում):

Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց. Յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականից իր ներդրումն է անում խմբի ընդհանուր ցուցանիշում:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար: Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու մոտիվացիա:

### *ԽՃանկար*

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում դասընկերներին:

Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորոցները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերը

*Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում* – Սովորողները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի <<փորձագետ>>: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:



## Շրջագայություն պատկերասրահում

Սա խճանկար մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, կատարած աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

### Ընթացքը

1. Ուսուցիչը ուսումնական նյութը բաժանում է 4-6 մասերի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ինքնուրույն ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:

2. Խմբերն աշխատում են ուսումնական նյութի իրենց տրված մասի վրա, և ստացված արդյունքները մշակում նկարի, կոլաժի, աղյուսակի, դիագրամի կամ գրաֆիկի տեսքով:

3. Պատրաստի աշխատանքները փակցվում են դասասենյակի կամ միջանցքի պատերին՝ ստեղծելով <<պատկերասրահ>>:

4. Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում 4 նոր խումբ՝ ըստ իրենց խմբի ներսում ունեցած համարների:

5. Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ իսկ ցուցանմուշի ստեղծմանը՝ կատարելով գիղի դեր, մանրամասն ներկայացնում է իրենց աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկություններին համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, որք բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

6. Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

### Մեկնաբանություններ

Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո , համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադասարձ կապ են ապահովում:

### Խմբային հետազոտության մեթոդ

Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Այս մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուլիի տեսությունից: Դյուլին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում , որպեսզի այդ ամենը հետագայում կիրառեն կյանքում:

Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել երեք փոխկապակցված նպատակ.

- Խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակցված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները,
- Պայմաններ ստեղծել որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութի բովանդակությունը,
- Սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:

Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը, զարգացնում են իրենց հետազոտելու և համագործակցելու հմտությունները:

### 1.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն հետազոտությունների՝ համագործակցային ուսուցումը ուժեղացնում է

- Համագործակցային հմտությունները (թիմային աշխատանք, սոցիալական հմտություններ)
- Տեղեկատվության մշակման հմտությունները (մտածողության հմտություններ),
- Բազմազանության (բազմակարծության) ըմբռնումն ու ընդունումը,
- Անհատականությունը՝ ինքնավստահությունը և ակտիվ քաղաքացիությունը
- Ստեղծագործական կարողությունները և գործնականությունը:[11]

Համագործակցության մեջ սովորելու նպատակը ոչ միայն յուրաքանչյուր աշակերտի կողմից իր անհատական զարգացման առանձնահատկություններին համապատասխան մակարդակում գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումն է, այլ նաև նրանց մեջ սոցիալական նշանակալի համընդհանուր հմտությունների ձևավորումը:

Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն իրապես համագործակցային է և ոչ թե պարզապես ավանդական խմբային աշխատանք կամ միայն ինտենսիվ (փոխներգործուն) վարժություն:

Համագործակցային ուսուցումը աչքի է ընկնում մի շարք առավելություններով.

*Ձարգացնում է ինքնակառավարման և առաջնորդության հմտությունները.* երբ անհատներին հանձնարարվում է համատեղ աշխատել ընդհանուր նպատակին հասնելու համար նրանց հնարավորություն է տրվում զարգացնել բարձր մակարդակի հմտություններ:

*Ձարգացնում է սովորողների հմտություններն ու գիտելիքները.* երբ սովորողները մասնակցում են համագործակցային ուսուցմանը, նրանք զարգացնում են հմտությունների և գիտելիքների լայն շրջանակ: [9]

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են.

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը,
- հոգեբանական և ֆիզիկական առաջնության ապահովումը,
- սթրեսի հաղթահարումը,

- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

## **Գլուխ 2**

### **2.2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ <<ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

#### **Դասի պլան**

**Առարկա** – Ես և շրջակա աշխարհը

**Դասարան** – IV

**Դասի թեման** – Օվկիանոսներ և մայրցամաքներ

**Դասի տիպը** – նոր նյութի հաղորդման դաս

**Մեթոդներ** – Համագործակցային (աշակերտների թիմային առաջադիմություն)

**Ակադեմիական նպատակը** –

- ծանոթացնել երկրի գնդաձև մոդելին՝ գլոբուսին, կիսագնդերի քարտեզին՝ ցույց տալով մայրցամաքներն ու օվկիանոսները:

- Տալ մինիմալ տեղեկություններ յուրաքանչյուր մայրցամաքի և օվկիանոսի վերաբերյալ:

**Սոցիալական նպատակը** –

.ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ, ցույց տալ խմբային աշխատանքի առավելությունները, ձևավորել ստեղծագործական կարողություններ,

.հնարավորություն ընձեռել միաժամանակ լինելու սովորող և սովորեցնող, դաստիարակել խմբում աշխատելու, միասին միևնույն նպատակին հասնելու կարողություններ,

**Վերջնարդյունքը**- աշակերտները պետք է կարողանան գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքներն ու օվկիանոսները: Անվանեն դրանք:

Յուրաքանչյուր օվկիանոսի և մայրցամաքի վերաբերյալ ունենա որոշակի պատկերացում:

**Դասի կահավորում**`-կիսագնդերի քարտեզ, գլոբուս, առանձին մայրցամաքների ուրվագծային քարտեզներ, կենդանիների ու տարբեր սիմվոլների մանրադիր նկարներ, սուսինձ, ինքնակաշուն թերթիկներ, մարկերներ:

## **ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ**

### ***Խթանման փուլ***

Ցուցադրելով կիսագնդերի քարտեզը և գլոբուսը ուղղենք հետևյալ հարցերը.

- Ո՞ր գույնն է գերակշռում և ի՞նչ է այն նշանակում:
- Իսկ ի՞նչ են կոչվում այն հատվածները, որոնք կապույտ չեն:
- Քանի՞ մայրցամաք կա և որոնց անվանումները դուք գիտեք:
- Իսկ ի՞նչ կարող եք ասել սպիտակ հատվածի մասին:

### ***Իմաստի ընկալման փուլ***

**ՈՒՍՈՒՑԻՉ**-ինչպես արդեն հասկացանք՝ գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրայի կապույտ և կանաչ գույները

ցույց են տալիս, որ երկարգնդի վրա կան և՛ ջրային տարածքներ, և՛

ցամաքային: Դրանք օվկիանոսներն են ու մայրցամաքները: Օվկիանոսները 4ն են՝

Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական և Հյուսիսային Սառուցյալ: Ամենամեծը Խաղաղ

օվկիանոսն է, որը անվանել է ծովագնաց Ֆ.Մագելանը, իսկ ամենափոքրը

Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսն է...

Դասարանը կբաժանենք 3 խմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների :

Խմբերին տրվում է 3 մայրցամաքներին(Աֆրիկա, Ավստրալիա, Անտարկտիդա) առնչվող մեկական հավելյալ նյութ, իսկ տարբեր կենդանիների նկարներն ու սիմվոլները, մայրցամաքների ուրվագծային քարտեզները դրված կլինեն ուսուցչի

սեղանին: Աշակերտներից պահանջվում է կարդալ նյութը, գուշակել թե ո՞ր մայրցամաքի մասին է խոսքը, ապա ընտրել համապատասխան մայրցամաքի ուրվագծային քարտեզն ու համապատասխան նկար-պատկերները: Ուրվագծային քարտեզի վրա գրել տվյալ մայրցամաքի անվանումն ու փակցնել դրան բնորոշ սիմվոլները:

Պետք է նշել, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց: Յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականից իր ներդրումն է անում խմբի ընդհանուր ցուցանիշում:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց դասընկերներին բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

**Գշտադաստման փուլ** - Չտարրալուծված խմբերին կտրվի ինքնակաշուն թերթիկներ ու մարկերներ, թերթիկների վրա գծված կլինի ԳՈՒՍ աղյուսակ: Ուսուցչի հանձնարարությամբ կլրացնեն աղյուսակը, որի հիման վրա էլ կհանձնարարվի տնային աշխատանք (դարձյալ խմբերով):

**Տնային աշխատանք**-մյուս երեք մայրցամաքները, որոնց մասին չխոսեցինք, նույն խմբերը տանը կուսումնասիրեն ու կկատարեն նմանատիպ աշխատաք, սակայն այս անգամ նյութերն ու սիմվոլները կփնտրեն ինքնուրույն:

## **Դասի պլան**

**Առարկա** – Ես և շրջակա աշխարհը



Ապա թիմերում նորիվ քննարկելով՝ ամրապնդում են իրենց դիրքորոշումը, ընտրում իրենց խոսնակին, ովքեր պետք է ներկայացնեն խմբերի կարծիքները բանավեճի ընթացքում:

**Կռադատման փուլ- խաղ**

**Տնային աշխատանք-** Յուրաքանչյուր խումբ ավելի մանրամասն կհետազոտի իրեն հետաքրքրող օրգան համակարի նշանակությունը:

### **2.3 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Բերված դասի պլանները և նմանօրինակ առաջարկություններ կիրառվել են հանրակրթական դպրոցի <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասերին:

Դիտման արդյունքում պարզ է դառնում, որ աշակերտների շրջանում նկատվում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ, կա մեծագույն մոտիվացիա թեմայի յուրացման հարցում: Սովորողները ձգտում են առավել մեծ ակտիվություն ցուցաբերել իրենց թիմին օգտակար լինելու նպատակով:

Համագործակցային ուսուցումը մեծ հնարավորություն է տալիս դասարանում աշխատանքային մթնոլորտ ստեղծել, ավելի է մտերմացնում աշակերտներին: Այն թույլ է տալիս, որ յուրաքանչյուր աշակերտ իրեն կոլեկտիվի անդամ զգա, ինտեգրվի կոլեկտիվում, առանց որևէ խտրականության, հասկանա իր գործողությունների կարևորությունը խմբին հաջողություններ բերելու գործում, գնահատի իր ուրույն դերը խմբում:

Հայտնի է, որ ուսուցչակենտրոն ուսուցման ժամանակ աշակերտը պարզապես ընկալողի դերում է հանդես գալիս: Բայց երբ աշակերտները համագործակցելով, որոշակի հետազատական աշխատանքներ կատարելով են հասնում ինչ-որ արդյունքի, և յուրաքանչյուր աշակերտ սովորող լինելուց բացի հնարավորություն է ստանում լինել սովորեցնողի դերում դա նրան մեծագույն հաճույք է պատճառում, ինչն էլ բարելավում է դասի նպատակների իրականացմանը: Բացի այդ, սովորեցնողի կարգավիճակը աշակերտների մոտ որոշակի հմտություններ է



զարգացնում, օրինակ հաղորդակցության կարողություն, համբերատար և հանդուրժող վերաբերմունք:

Համագործակցային ուսուցումը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մյուս ուսուցման եղանակները:

Համագործակցային ուսուցման ժամանակ աշակերտները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ:

Համագործակցային ուսուցման տարրերի անընդհատ օգտագործման դեպքում խմբերը կհասնեն համագործակցային բարձր մակարդակի:

Համագործակցային ուսուցումը կատարում է երկու կարևոր գործառույթ.

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,
- խթանում է նոր գիտելիքների արդյունավետ յուրացմանը

Այս ամենից բացի, աշակերտներին խնդրել էինք պատասխանել նաև հետևյալ հարցերին, որը կազմված է Վ. Ս. Չերեպանովի հետաքրքրության աստիճանի ստուգման սանդղակի հիման վրա: Ինչպե՞ս կբնութագրեք դասը.

ա)անհետաքրքիր էր,

բ)հետաքրքիր էր,

գ)շատ հետաքրքիր էր,

Այս հարցով նպատակ ենք ունեցել պարզելու սովորողների հետաքրքրության ցուցանիշը: Չերեպանովի առաջարկած մեթոդիկայի հիմքում դրված է հետաքրքրության ցուցանիշի որոշման բանաձև.

Համադրելով այս հարցին երկու գիտափորձերից ստացված պատասխանները և արդյունքները հաշվարկելով բանաձևով, ստացանք, որ փորձարարական խմբերում հետաքրքրության ցուցանիշը կազմում է մոտավորապես 0,8 , որը , համաձայն Չերեպանովի սանդղակի, համապատասխանում է <<շատ հետաքրքիր է>> ցուցանիշին: Իսկ ստուգողական խմբերում հետաքրքրության ցուցանիշը կազմել է մոտավորապես 0.61 , որը համապատասխանում է <<հետաքրքիր է>> սանդղակին:

Սա հիմնավորում է այն միտքը, որ համագործակցային ուսուցման մեթոդների կիրառությունը մաթեմատիկայի դասը դարձնում է ավելի հետաքրքիր:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով, կատարված աշխատանքից պարզ է դառնում, որ դասավանդման հնացած ձևերը անկարող են հետաքրքիր լինել աշակերտների համար, և չեն կարող զարգացնել բավարար գիտելիքներ և հմտություններ: Ժամանակակից ուսուցիչները պարտավոր են դասավանդում իրականացնել այն մեթոդներով, որոնց արդյունավետության մեջ համոզվել են գործնականում:

Համագործակցային ուսուցումը ենթադրում է երեխայի համար ստեղծել մի իրավիճակ, որտեղ նա տազնապ չի ունենում, հանգիստ է: Սա անչափ կարևոր պայման է: Ապա՝ ամեն ինչ եթե ուսուցիչն է սովորեցնում, այսինքն՝ ուսուցչակենտրոն ուսուցման ժամանակ աշակերտը հանդես է գալիս պարզապես ընկալողի դերում: Բայց երբ աշակերտները համագործակցելով՝ միասին են տվյալ հարցի շուրջ մտածում, յուրաքանչյուր աշակերտ սովորող լինելու հետ մեկտեղ դառնում է նաև սովորեցնող: Իսկ դա որոշակի հմտություն է զարգացնում, օրինակ, հաղորդակցության կարողություն:

Համագործակցային ուսուցման մեթոդները առավել հազեցած կարող են դարձնել տարրական դպրոցի դասերը, այս մեթոդի կիրառությունը աշակերտների շրջանում առաջացնում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ, քանի որ սովորողների ջանքերն ուղղվում են միևնույն ընդհանուր նպատակին համատեղ

հասնելուն: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անադմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

Այս մեթոդի կիրառությունը կարող է օգտակար լինել նաև նրանով, որ եթե դասի ընթացքում, սովորողների մոտ կա վախ՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնական նյութի ծավալի մեծության նկատմամբ, ապա խմբում աշակերտների սեփական ուժերի նկատմամբ հավատն ու վստահությունը կլինի ակնհայտ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովսեփյան Ա., Կարապետյան Ա. , Հովհաննիսյան Գ.«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 3-րդ դասարանի դասագիրք
2. Հովսեփյան Ա., Կարապետյան Ա. , Հովհաննիսյան Գ.«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 4-րդ դասարանի դասագիրք
3. Լ.Ալեքսանյան,Ն.Թորոսյան .«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 3-րդ դասարանի դասագիրք
4. Լ.Ալեքսանյան,Ն.Թորոսյան .«Ես և շրջակա աշխարհը» առարկայի 4-րդ դասարանի դասագիրք
5. Այվազյան Է. Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Երևան, ԵՊՀ հրատարակչություն , 2016, 202էջ
6. Ժամանակակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ,գնահատում, Երևան , Նոյան Տապան, 2003, 404էջ
7. Черепанов В., Экспертные методы в педагогических исследованиях, Москва, Педагогика, 1980, 150с.

8. Johnson D., Johnson R., (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon, p. 37:
9. <https://depts.washington.edu/cpreeuw/wordpress/wp-content/uploads/2015/12/SCC-FG-03.pdf>
10. [http://www.sreb.org/sites/main/files/file-attachments/mdc\\_brochure\\_feb\\_2015.pdf](http://www.sreb.org/sites/main/files/file-attachments/mdc_brochure_feb_2015.pdf)
11. <https://elib.bsu.by/bitstream/123456789/102706/1/109-112.pdf>
12. <https://forum.armedu.am/forum>